Արձանագրություն N 7

«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-83» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» նոյեմբերի 2021 թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի.

Նախագահ՝ Ա. Խառատյան

Անդամներ՝ Կ. Փալյան, Մ. Երիցյան

Քարտուղար՝ Ա. Վիրաբյան

Բացակայում է.

Օրակարգ.

**«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-83» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնային բանակցության վարում և արդյունքների հաստատում**

1. «Ռեդինետ» ՓԲԸ ընկերությունը գնային բանակցությանը չի մասնակցել:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները ներկայացվել են գնահատման թերթիկում:

Որոշում.

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված նախորդ մրցույթը չի կայացել առաջարկված գինը նախահաշվային գումարից բարձր լինելու պատճառով, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությունը, բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից:
2. Ընտրված մասնակից ճանաչել «Ռեդինետ» ՓԲԸ-ին:
3. Համաձայն «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի, անգործության ժամկետ չի սահմանվում, հետևաբար, պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել՝ «Ռեդինետ» ՓԲԸ-ին՝ 8,465,160 /ութ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար մեկ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ ԱԱՀ:

Ընդունվել է որոշում՝

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

Ստորագրություններ.

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ __________ Ա. Խառատյան

Անդամներ՝ __________ Կ. Փալյան

__________ Մ. Երիցյան

Քարտուղար՝ __________ Ա. Վիրաբյան